Պետական գույքի կառավարման կոմիտեի
«Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն»
ՊՈԱԿ

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻՆ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՄՐԱՑՎԱԾ՝ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՄԻԱՎՈՐ ՄԻՆՉԵՎ ՀԻՆԳ ՄԻԼԻՈՆ ԴՐԱՄ ԳՆԱՀԱՏՎԱԾ ԱՐԺԵՔՈՎ ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ՝ ՕՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԳՏՆՎԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

2 0 1 9 թ.

I. Ընդհանուր դրույթներ

Սույն ծրագիրն իրականացվում է Հայաստանի Հանրապետության Կառավարության 2016 թվականի մարտի 24-ի N 298-Ն որոշման պահանջներին համապատասխան՝ պետական հիմնարկներին և կազմակերպությունների ամրացված՝ մինչև հինգ միլիոն դրամ գնահատված արժեքով շարժական գույքի (այսուհետ՝ Գույք)՝ օտարման գործընթացում գտնվելու ժամանակահատվածում դրա պահառության ծառայություններ մատուցելու եղանակով:

Մինչև սույն ծրագրի իրականացման սկիզբը օտարման ենթակա Գույքը հիմնականում պահպանվում էր այն տիրապետող և հանրապետության ողջ տարածքով սփռված տասնյակ հիմնարկներում ու կազմակերպություններում՝ հիմնականում առանց Գույքի տեխնիկական վիճակը, դրա պահպանման պայմանները, Գույքի փաստաթղթերի ու պատկանելիքների ամբողջականությունը վերահսկելու և դրա հավանական գնորդների կողմից Գույքը ազատորեն զննելու որևէ հնարավորությունների:

Գույքի պահառությունը կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 10-ի N 1033-Ն որոշմամբ այդ նպատակով ՊՈԱԿ-ին ամրացված՝ Երևան քաղաքի Հաղթանակի 2-րդ փողոցի 79 հասցեում գտնվող տարածքում (այսուհետ՝ «պահառության տարածք»): Ծրագրով նախատեսված աշխատանքները սկսվել են իրականացվել 2016 թվականի ապրիլի մեկից:

II. Ծրագրի հիմնական խնդիրները.

- պահառության տարածք ներկայացված Գույքի տեխնիկական վիճակի նախնական զննություն՝ Գույքը հանձնող պետական հիմնարկների (կազմակերպությունների) լիազոր ներկայացուցիչների մասնակցությամբ, կազմելով Գույքի տեխնիկական վիճակի վերաբերյալ համապատասխան արձանագրություններ, ինչը թույլ կտա ***Գույքի օտարման գործընթացում գտնվելու ամբողջ ժամանակահատվածում վերահսկել գույքի վիճակի ու բնութագրերի պահպանությունը՝ ապահովելով դրանց կայունությունը,*** ինչը հնարավոր չէր կատարել մինչև սույն ծրագրի իրականացման ժամանակահատվածում և ինչի արդյունքում հիմնականում անխնամ պահպանվող Գույքի վիճակն ու բնութագրերն այդ ընթացքում հաճախակիորեն վատթարանում էին՝ բացասական ազդելով Գույքի արժեքի վրա,
- Գույքը, դրա փաստաթղթերն ու պատկանելիքները Գույքը հանձնող հիմնարկների (կազմակերպությունների) լիազոր ներկայացուցիչներից պահառությանն ընդունում՝ կազմելով հանձնման-ընդունման համապատասխան ակտ, ինչը թույլ կտա ***Գույքի օտարման գործընթացում գտնվելու ամբողջ ժամանակահատվածում ապահովել դրա փաստաթղթերի ու պատկանելիքների ամբողջականությունը,*** ինչը հնարավոր չէր կատարել մինչև սույն ծրագրի իրականացման ժամանակահատվածում և ինչի արդյունքում Գույքի փաստաթղթերի ու պատկանելիքների որոշ մասը կամ ի սկզբանե բացակայում էր, կամ դրանք հիմնականում անխնամ պահպանելու արդյունքում հաճախ ամբողջությամբ չէին հանձնվում Գույքն աճուրդով գնորդին՝ բացասական ազդելով պետության կողմից կազմակերպված Գույքի օտարման գործընթացի թափանցիկության ու անաչառության վերաբերյալ հասարակայնության կարծիքի վրա,
- ***Գույքի ապահով պահառություն***, ինչը հիմնականում հնարավոր չէր կատարել մինչև սույն ծրագրի իրականացման ժամանակահատվածում, քանի որ Գույքը տիրապետող կազմակերպություններն այդ նպատակով որևէ ծախսեր չէին նախատեսում ու աշխատանքներ չէին կա-

ապակոմպլեկտավորելու) դեպքեր, որոնց արդյունքում արհեստականորեն նվազում էր նման Գույքի արժեքը և հաճախ առաջանում էր նման Գույքը վերստին գնահատելու և/կամ օտարման գործընթացը վերստին սկսելու անհրաժեշտություն,

- ***Գույքի հավանական գնորդների համար այն գնելու հնարավորությունների ապահովում***, ինչը հիմնականում հնարավոր չէր կատարել մինչև սույն ծրագրի իրականացման ժամանակահատվածում, քանի որ Գույքը տիրապետող կազմակերպությունները հիմնականում սփռված են հանրապետության ողջ տարածքով, իսկ դրանց մի մասի (օրինակ՝ պետական պահպանության կամ ազգային անվտանգության ծառայությունները, դատախազությունը, հատուկ քննչական ծառայությունը, ոստիկանության, արտակարգ իրավիճակների նախարարության կամ դատական դեպարտամենտի տարածքային կառույցները, և այլն) աշխատանքի ռեժիմներն էլ բացառում են հավանական գնորդների կողմից Գույքը ցանկացած պահին գնելու հնարավորությունները, ինչը արհեստականորեն առաջացնում էր Գույքի աճուրդներին մասնակցել ցանկացողների քանակի զգալի նվազում և, որպես հետևանք, գնային մրցակցության արհեստական սահմանափակում,
- ***Գույքը, դրա փաստաթղթերի ամբողջական փաթեթներն ու դրա բոլոր պատկանելիքները Գույքի օտարման գործընթացի արդյունքներով որոշված դրա նոր սեփականատիրոջը հանձնելը՝ կազմելով հանձնման-ընդունման համապատասխան ակտեր***, ինչը վերը թվարկված պատճառներով հիմնականում հնարավոր չէր կատարել մինչև սույն ծրագրի իրականացման ժամանակահատվածում՝ որպես հետևանք առաջացնելով պետության կողմից կազմակերպված Գույքի օտարման գործընթացի թափանցիկության ու անաչառության և կոռուպցիոն ռիսկերի առկայության վերաբերյալ հասարակայնության հիմնավոր կասկածներ,
- ***Գույքի ու դրա շարժի վերաբերյալ տեղեկատվության միասնական վիճակագրության վարում***, ինչը միանշանակ նպաստում է պետական սեփականություն հանդիսացող շարժական գույքի կառավարման ընդհանուր արդյունավերության բարձրացմանը:

III. Ծրագրի նպատակը

Ապահովել գույքի օտարման գործընթացի առավել թափանցիկությունը և արդյունավետությունը՝ Գույքի արտաքին զննությունը մատչելի դարձնելու և օտարման գործընթացի ամբողջ ընթացքում Գույքի արժեքի նվազմանը սպառնացող ռիսկերը հնարավորինս նվազեցնելու միջոցով:

IV. Ծրագրով նախատեսված աշխատանքների փաստացի ցուցանիշները՝

- 2017 թվականի ընթացքում նույնաբովանդակ Ծրագրով պահառության է ընդունվել 67 միավոր Գույք (տրանսպորտային միջոցներ),
- Գույքի նոր սեփականատերերին է հանձնվել 393 միավոր Գույք (391 միավորը՝ տրանսպորտային միջոցներ, 2 միավորը՝ այլ շարժական գույք),
- 2018 թ. հունվարի 01-ի դրությամբ պահառության ներքո գտնվել է 33 միավոր Գույք (32 միավորը՝ տրանսպորտային միջոցներ, 1 միավորը՝ այլ շարժական գույք),
- 2018 թ. նույնաբովանդակ Ծրագրով կազմակերպել 250 միավոր Գույքի պահառություն,
- 2019 թ. սույն ծրագրով նախատեսվում է կազմակերպել 300 միավոր Գույքի պահառություն:

Բացի այդ 2018 թ. պահառության տարածքում կատարվել են նորոգման ու բարեկարգման որոշակի աշխատանքներ՝

- աշխատասենյակների, պահակակետի և գոյություն ունեցող սանհանգույցի ներքին պատերի, մասնակի նորոգում,
- պահառության տարածքի պարիսպի բացակայող (տարիներ առաջ փլված) հատվածի նորոգում (վերականգնում)
- բազմաթիվ մետաղյա դռների ու դարպասների մեխանիկական մաքրում և ներկում:

V 2019 թ. գոյություն ունեցող պարտավորությունների հաշվարկն ու հիմնավորումը

Սույն ծրագրով նախատեսված աշխատանքներն ապահովելու համար անհրաժեշտ է իրականացնել՝

- պահառության տարածքում էլեկտրամատակարարման, հեռախոսակապի, ինտերնետ կապի, ջրամատակարարման, կոյուղու և աղբահանության շարունակական կազմակերպում,
- պահառության տարածքի մի մասի մաքրում (հարմարեցում)՝ տրանսպորտային միջոցներ հանդիսացող Գույքի կայանման համար և հետագայում այդ մասի զգալի ընդլայնում,
- պահառության տարածքի մի մասում (նախատեսված տրանսպորտային միջոցներ հանդիսացող Գույքի կայանման համար) արտաքին գիշերային լուսավորության համակարգի անխափան աշխատանքի շարունակական ապահովում, անհրաժեշտության դեպքում՝ այդ համակարգի ընդլայնում,
- պահառության տարածքի մի մասում (նախատեսված տրանսպորտային միջոցներ հանդիսացող Գույքի կայանման համար) տեղադրված շուրջօրյա տեսահսկման համակարգի անխափան աշխատանքի շարունակական ապահովում, անհրաժեշտության դեպքում՝ այդ համակարգի ընդլայնում:

VI.Ծրագրի ոչ ֆինանսական քանակական ցուցանիշները

«Հիմնարկներին և կազմակերպություններին ամրացված յուրաքանչյուր միավոր՝ մինչև հինգ միլիոն դրամ գնահատված արժեքով օտարման ենթակա շարժական գույքի պահառության կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի 25.04.2016 թ. N 35-Ա հրամանով հաստատված կարգի առանձնահատկություններով պայմանավորված՝ մինչ այժմ Գույքի պահառության ծրագրի կատարման գնահատման ոչ ֆինանսական քանակական ցուցանիշներ չեն մշակվել, իսկ փորձնական կարգով որպես նման ցուցանիշներ ընտրվածները (գործոնները, քանակները և այլն) թույլ չեն տալիս օբյեկտիվորեն գնահատել սույն ծրագրի արդյունքներն ու դրա իրականացման արդյունավետությունը:

Ելնելով վերը նշվածից, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գույքի պահառության գործընթացի ծախսերը գրեթե կապված չեն Գույքի քանակի կամ դրա տեսակների հետ, առաջարկվում է որպես սույն ծրագրի ֆինանսավորման եղանակ դիտարկել դրամաշնորհի տրամադրում.

VII.2019 թվականի ծախսային պարտավորությունների հաշվարկը կատարվել է հաշվի առնելով 2017 և 2018 թվականների գույքի պահառության համար կատարված փաստացի ծախսերը:

Ծրագրով նախատեսված աշխատանքները կատարելու համար մեկ տարվա հաշվարկով ծախսերը դասակարգվում են հետևյալ կերպ

հազ. ՀՀ դրամ

N	Հոդվածի անվանումը	Գումարը	Այդ թվում՝ ԱԱՀ
1.	Աշխատանքի վարձատրություն	21400,0	
2.	Էներգետիկ ծառայություններ	*680,0*	*113,4*
3.	Կոմունալ (ջրամատակարարման և ջրահեռացման) ծառայություններ	*97,0*	*16,2*
4.	Կապի (ներառյալ ինտերնետային) ծառայություններ	*175,0*	*29,2*
5.	Համակարգչային ծառայություններ	*50.0*	
6.	Գրասենյակային նյութեր	*108,8*	*18,1*
7.	Տրանսպորտային նյութեր (ավտոմեքենայի վառելիք)	*112,5*	*18,8*
8.	Կենցաղային նյութեր և պարագաներ	*633,6*	*86,3*
9.	Պարտադիր վճարներ /աղբահանություն/	*229.2*	
10.	Այլ ծախսեր	*82,2*	
	ԸՆԴԱՄԵՆԸ	***23568,3***	***282,0***

Ծրագրի արժեքը կազմում է՝

Ծառայության արժեք	23 568,3 հազ ՀՀ դրամ
Ավելացված արժեքի հարկ-ԱԱՀ	4 713,7 հազ ՀՀ դրամ
Հաշվանցման ենթակա ԱԱՀ	-282,0 հազ ՀՀ դրամ
Ընդամենը	**28 000,0 հազ. ՀՀ դրամ**

1. Աշխատանքի վարձատրություն, ներառյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը

N	Պաշտոնը	Դրույքը /ՀՀ դրամ/	Սահման-ված հա-վելավճարը	Հաստիք-ների քանակը	Ընդհանուր գումարը /ՀՀ դրամ/
1	*Ստորաբաժանման ղեկավար*	*257 000*	-	*1*	*257 000*
2	*Ստորաբաժանման ղեկավարի տեղակալ*	*243 000*	-	*1*	*243 000*
3	*Էլեկտրագետ*	*106 000*	*53 000*	*0,84*	*133 430*
4	*Վարորդ ավտոփականագործ*	*125 000*	-	*1*	*125 000*
5	*Պահակ*	*91 000*	*27 300*	*8*	*946 400*
6	*Հավաքարար*	*78 500*	-	*1*	*78 500*
	Ընդամենը ամսեկան՝	***900500***	***58 876***	***13***	***1 783 330***

1) Մեկ ամսվա աշխատանքի վարձատրության ընդհանուր գումարը կազմելու է 1. 783, 3 հազ. ՀՀ դրամ, իսկ 2019 թ. տարեկան ընդհանուր գումարը՝ 21 400,0 հազ ՀՀ դրամ:

2) Հավելավճարները սահմանվել են.

- ՊՈԱԿ-ի՝ պահառությունն իրականացնող ստորաբաժանման Էլեկտրագետին՝ համաձայն «Ծանր վնասակար արտադրությունների, աշխատանքների, մասնագիտությունների և պաշտոնների ցանկերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 02.12.2010 թ. N 1698-ն որոշման պահանջների,
- ՊՈԱԿ-ի՝ պահառությունն իրականացնող ստորաբաժանման անընդմեջ (հերթափոխային) ռեժիմով աշխատող պահակներին՝ համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի 143 հոդվածի պահանջների:

Էներգետիկ ծառայությունների ծախսերի հաշվարկը կատարվել է «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծում Հայաստանի Հանրապետության պետական մարմինների գծով բյուջետային ծախսերի առանձին տեսակների՝ ջեռուցման, վառելիքի և էլեկտրաէներգիայի ձեռքբերման ծավալների հաշվարկման հիմքում դրվող նորմաները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 28.04.2005 թ N 629-Ն որոշման N 1 հավելված՝ «Հայաստանի Հանրապետության պետական մարմինների վարչական շենքերի ջեռուցման համար ջերմային էներգիայի տարեկան ծախսի նորմաների», հաշվի առնելով 2016-17 թթ. նույն նպատակով կատարված փաստացի ծախսերի քանակները:

1) էլեկտրաէներգիայի ծախսերի հաշվարկ /բացառությամբ ջեռուցման/

N	Էլեկտրաէներգիայի սպառման օբյեկտի անվանումը	Քանակը (հատ)	Հզորությունը	Շահագործման տևողությունը ժամանակը	Շենքերի և շինությունների մակերեսը (մ²)	Տարեկան ծախսի նորմը (կՎտ/ժ/1 մ²)	Ընդամենը Տարեկան ծախսի նորմը (կՎտ/ժ)	Ընդամենը էլեկտրաէներգիայի ծախսը (հազ.դրամ)
1	2	3	4	5	6	7	8	9
1	2 աշխատասենյակ /40 քառ. մ/ և 1 պահակակետ /10 քառ. մ/	x	x	x	50	29.32	1466.0	67.7
3	Համակարգիչների (1 հատը ներառում է տպիչ սարք) և այլ կազմտեխնիկայի ծախսը, 8-ժամյա աշխատանքային օրվա համար	1	x	x	x	1100	1100.0	50.8
4	Այլ հատուկ սարքեր (արտաքին լուսավորություն, տեսահսկման համակարգ)			11978.0	0.0	0.0	10994.8	491.5
4,1	Արտաքին լուսավորություն ցերեկային ժամերի համար	26	0.1	879			2285.4	105.6
4,2	Արտաքին լուսավորություն գիշերային ժամերի համար	26	0.1	2339	x	x	6081.4	220.1
4,3	Տեսահսկման համակարգի շահագործում ցերեկային ժամերին	1	0.3	5840	x	x	1752.0	80.9
4,4	Տեսահսկման համակարգի շահագործում գիշերային ժամերին	1	0.3	2920	x	x	876.0	31.7
4,5	Կենցաղային սարքեր	2	0.2	2880			1152.0	53.2
	Ընդամենը		x	x	x	x	x	**396.7**

Ջեռուցվող օբյեկտի անվանումը	Շենքի տեսակը (քար, կամ պանելային, միաձույլ)	Շենքի ծավալը (մ³) հաշվարկային ջերմային բեռնվածքով	Ամբողջական ջերմամեկուսացված մակերեսը, ըստ հատակագծի (մ²)	Ջերմային էներգիայի սպառման վերահսկիչ ծախսի նորմը վառելիքի ծախսի նորմով մ³ 1 ժ/վիկ	Ընդամենը կարիքն ըստ ծախսի նորմի (կվտ/ժ)	Ընդամենը ջեռուցման համար անհրաժեշտ էլեկտրաէներ-գիան (կՎտ·ժ) Ներառյալ վիճակ
2 աշխատասենյակ /40 քառ.մ/, 1 պահակակետ /10 քառ.մ/ 3 մ բարձրությամբ	քար		150	40.8	6120.0	282.7
Ընդամենը	x	x	x	x	**6120.0**	**282.7**

Ընդամենը՝ էլեկտրաէներգիայի ծախս՝ 680,0 հազ. ՀՀ դրամ

3. Կոմունալ (ջրամատակարարման և ջրահեռացման) ծառայություններ.

1) Աշխատանքային օրերի համար /ստորաբաժանման աշխատակիցներ, Գույքը հանձնող անձիք, ՊՈԱԿ-ի գնահատման բաժնի աշխատակիցներ, Գույքի հավանական գնորդներ և այլն/ 50մարդ x 250 օր = 12500 մարդ օր x 30 լիտր /մեկ մարդու համար/ x 0.180 դրամ = 67,5 հազ ՀՀ դրամ
2) Ոչ աշխատանքային օրերի համար /ստորաբաժանման աշխատակիցներ/ 15 մարդ x 115 օր = 1725 մարդ օր x 30 լիտր /մեկ մարդու համար/ x 0.180 դրամ = 9,3 հազ ՀՀ դրամ
3) Տնտեսական կարիքների համար 20,2 հազ ՀՀ դրամ

Ընդամենը կոմունալ (ջրամատակարարման և ջրահեռացման) ծախս՝ 97,0 հազ ՀՀ դրամ:

4. Կապի (ներառյալ ինտերնետային) ծառայություններ համաձայն պայմանագրերի

1) Հեռախոսակապ՝ 1 հեռախոսահամար x 2000 ՀՀ դրամ x 12 ամիս = 24.0 հազ ՀՀ դրամ /մեկ հեռախոսի համար սահմանված հաստատուն ծախս/ +1000 ՀՀ դրամ
2) Ինտերնետային կապ՝ 1 գիծ x 12500 ՀՀ դրամ x 12 ամիս = 150,0 հազ. ՀՀ դրամ /տեսահսկմնան համակարգի համար/

Ընդամենը կապի (ներառյալ ինտերնետային) ծառայությունների ծախս՝ 175,0 հազ.ՀՀ դրամ

5. Համակարգչային ծառայություններ

Համակարգչի սպասարկում, տպող սարքի քարթրիջի լիցքավորում և այլն)

Ընդամենը համակարգչային ծառայությունների ծախս՝ 50.0 հազ. ՀՀ դրամ

1	Թուղթ A4	տուփ	2100	20	42000
2	Թղթապանակ/-ռեգիստր - A4, 8սմ/	հատ	700	3	2100
3	Թղթապանակ պոլիէթիլենային բարակ /արագակար/	հատ	180	200	36000
4	Նշումների կպչուն թուղթ / 5 գույն/	հատ	400	3	1200
5	Գրիչ /կապույտ,կարմիր,սև, գելային/	հատ	250	20	5000
6	Մկրատ	հատ	250	1	250
7	Մատիտ	հատ	100	2	200
8	Ռետին	հատ	100	2	200
9	Ֆայլ (40 micron հաստությամբ)	հատ	15	1000	15000
10	Ընդգծիչ	հատ	250	4	1000
11	Նոթատետր	հատ	250	2	500
12	Ջնջիչ	հատ	250	3	750
13	Ասեղ N 10	տուփ	300	5	1500
14	Սոսինձ 21գր	հատ	220	3	660
15	Ամրակ /փոքր/	տուփ	200	7	1400
16	Սեղմակ /միջին/	հատ	65	5	325
17	Սեղմակ /փոքր/	հատ	45	5	225
18	Շտամպի թանաք	հատ	150	3	450
	Ընդամենը				**108,760**

Ընդամենը գրասենյակային նյութերի ծախս՝ 108.8 հազ << դրամ

7. Տրանսպորտային նյութեր (ավտոմեքենայի վառելիք) 112,5 հազ << դրամ

8. Կենցաղային նյութեր և պարագաներ

Տարածքում մաքրության աշխատանքները կատարելու համար անհրաժեշտ նյութեր, պարագաներ, շենքերում ու պահառության տարածքում կատարվելիք ընթացիկ (ներառյալ՝ վերանորոգման) աշխատանքների և վթարների ու անսարքությունների վերացման համար անհրաժեշտ նյութեր, պարագաներ, շենքերի ու պահառության տարածքի լուսավորությունն ապահովելու համար անհրաժեշտ պարագաներ և այլն:

Հաշվարկը կատարվել է հաշվի առնելով 2017-2018թթ գույքի պահառության համար կատարված փաստացի ծախսերը :

ՀՀ	Ապրանքի անվանումը	Չափի միավորը	Գինը	Քանակը	Գումարը /ՀՀ դրամ/
1	2	3	4	5	6
I.	Տնտեսական ապրանքներ				
1	Ավել	հատ	900	10	9,000
2	Ցախավել	հատ	2,000	14	28,000
3	Հատակ լվանալու ձող	հատ	1,000	2	2,000
4	Գոգաթիակ	հատ	250	3	750
5	Կահույք մաքրելու լաթ	հատ	500	18	9,000
6	Հատակ մաքրելու լաթ	հատ	500	9	4,500
7	Զուգարանի խոզանակ տակդիրով	հատ	1,000	2	2,000
8	Ապակիներ մաքրելու խոզանակ	հատ	950	3	2,850
9	Դույլ ցինկապատ 10լ	հատ	1,100	10	11000
10	Մաքրող նյութեր /ռախշա/	հատ	250	9	2,250
11	Լվացող նյութեր /ունիվերսալ/	հատ	900	8	7,200
12	Սանհանգույցի ախտահանող հեղուկ /ժավել/	լ	200	10	2,000
13	Լվացքի փոշի /ձեռքով լվանալու համար/	հատ	400	10	4,000
14	Զուգարանների մաքրման նյութ /բադիկ/	հատ	1,000	10	10,000
15	Աղբարկղ թիթեղյա	հատ	3,600	5	18,000
16	Ապակի մաքրելու միջոց	հատ	250	7	1,750
17	Ձեռքի հեղուկ օճառ /5 լ/	հատ	1,350	3	4050
18	Զուգարանի թուղթ ռուլոնով	հատ	165	95	15,675
19	Դրոշ	հատ	10,000	4	40,000
	Ընդամենը				174025
II.	Շինանյութ				
1	Կողպեք	հատ	1,500	5	7500
2	Ծորակի միջուկ	հատ	1,500	1	1500
3	Ճկախողովակ /ջրի միացումների համար/	հատ	1,200	2	2,400
4	Կիր	կգ	500	60	30000
5	Գառմոշկա	հատ	2,500	1	2500
6	Պապլավոկ	հատ	2,500	1	2500
7	Ջրի սիֆոն	հատ	1,000	1	1000
8	Զուգարանի կնոպկա	հատ	1,500	1	1500
9	Զուգարանի նստատեղ	հատ	2,200	1	2200
10	Ռեզինե անցումներ և անկյունակներ	հատ	250	4	1,000
11	Սիլիկոն	հատ	900	5	4,500
12	Ունիվերսալ սոսինձ	հատ	1,600	2	3,200
13	Բահ	հատ	2500	4	10000
14	Բահ/սուր ծայրով/	հատ	2500	4	10000
15	Փոցխ	հատ	2500	2	5000

1	2	3	4	5	6
III.	***Պահառվող գույքի պահպանության համար***				
1	Սկոճ	հատ	400	20	8,000
2	Սկոճ թղթե	հատ	500	35	17500
3	Թել վրանի	հատ	500	5	2500
4	Վրան /4*4/	հատ	6,000	5	30000
5	Պոլիէթիլենային թաղանթ	մ	250	90	22,500
6	Բանալիի կախիչ	հատ	150	50	7,500
7	Կապարակնիք	դրամ	30,000	1	30,000
	Ընդամենը				***118000***
IV.	***Էլեկտրամատակարարման և լուսավորության համակարգեր***				
1	Վարդակ, երկբևեռանի	հատ	700	6	4,200
2	Անջատիչ	հատ	700	4	2,800
3	Էկոնոմ լամպ /65ՎՏ/	հատ	1,200	31	37200
4	Էկոնոմ լամպ /95ՎՏ/	հատ	1,500	75	112,500
5	Կոթառ կերամիկական	հատ	1,000	25	25,000
6	Մալուխ պղնձե 2*2,5	մ	300	250	75,000
	Ընդամենը				***256700***
	Ընդամենը կենցաղային նյութեր				***633,525***

Ընդամենը կենցաղային նյութերի և պարագաների ծախս՝ 633.6 հազ. ՀՀ դրամ:

9. Պարտադիր վճարներ /աղբահանություն/

Աղբահանության վճարի հաշվարկը կատարվել է «Աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման կարգը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու 23.12.2011 թ. N 360-Ն որոշման 3-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված ամսական դրույքաչափով /ամսեկան 8 դրամ՝ տարածքի 1 մ^2 մակերեսի համար/, ինչը պահառության տարածքի 2386.5 մ^2 մակերեսի համար ամսեկան կկազմի 19092 ՀՀ դրամ

Ընդամենը պարտադիր վճարների /աղբահանություն/ ծախս՝ 229.2 հազ. ՀՀ դրամ:

10. Այլ ծախսեր

Այլ ծախսերի համար նախատեսվող գումարը հաշվարկվել է ընդհանուր ծախսերի 0.35% չափով:

Այլ ծախսերը կազմում են 82,2 հազ. ՀՀ դրամ:

«Պետական գույքի գույքագրման
և գնահատման գործակալություն»
ՊՈԱԿ-ի գլխավոր տնօրենի